


## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ



**Մարզկենտրոնը՝**  
ք. Եղեգնաձոր

**Տարածաշրջանները՝**  
Վայք,  
Եղեգնաձոր  
**Քաղաքները՝**  
Եղեգնաձոր,  
Վայք,  
Ջերմուկ

Տարածքը	2 308 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.8%
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	41
Քաղաքներ	3
Գյուղեր	52
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	51.4 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	18.1 հազ. մարդ
գյուղական	33.3 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	1.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	35.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	190 337.6 հա
այդ թվում՝ վարելահողեր	16 181.1 հա

**ՀՀ Վայոց ձորի մարզը** գտնվում է հանրապետության հարավային հատվածում: Մարզը պետական սահմանով հարավում սահմանակից է Նախիջևանին, հյուսիսում՝

ՀՀ Գեղարքունիքի մարզին, արևելքում՝ ՀՀ Սյունիքի մարզին և արևմուտքում՝ ՀՀ Արարատի մարզին:

**ՀՀ Վայոց ձորի մարզը** շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք յուրահատուկ բնական պատենշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն:

**ՀՀ Վայոց ձորի մարզն** ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ: Տարածքի 5.7%-ը կամ 13 240.1 հա կազմում են բնական անտառները: Արտակարգ խայտաբղետ է մարզի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և դրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնանցքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (60 մ):

**ՀՀ Վայոց ձորի** մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն աստիճանը հարավային շրջաններում հասնում է +41°C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35°C-ի: Տեղումները կազմում են տարեկան 300-ից 700 մմ:

2014թ.-ին **մարզի տնտեսության հիմնական հատվածների** տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 1.2 %,
- գյուղատնտեսություն՝ 2.2 %,
- շինարարություն՝ 3.0 %,
- մանրածախ առևտուր՝ 0.3 %,
- ծառայություններ՝ 0.6 %:

Մարզի **տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 64.5%-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը: **Արդյունաբերության** ոլորտում հիմնականում զարգացած են ոչ ոգելից ըմպելիքի՝ «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները:

**Բեռնատրանսպորտի խաղողումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզով է անցնում ՀՀ-ն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում:

Մարզում ակնհայտ են **ներքին և արտաքին զբոսաշրջության** զարգացման մեծ հեռանկարները:

**Շղեզնաձոր** քաղաքը (2014թ. տարեվերջին՝ 7.8 հազ. բնակիչ) համարվում է պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկը և գտնվում է Երևանից 123 կմ հեռավորության վրա:

**Շղեզնաձոր քաղաքի տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են **արդյունաբերությունն ու շինարարությունը**:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են խաղողի գինու, էլեկտրասարքավորանքի արտադրությունները, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները:

**Վայք քաղաքը** (2014թ. տարեվերջին՝ 5.8 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 132 կմ, մարզկենտրոնից՝ 16 կմ հեռավորության վրա:


**Վայք քաղաքի** տնտեսության հիմնական ճյուղն **արդյունաբերությունն է**: Հիմնականում զարգացած են հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների, շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադրությունները:

**Ջերմուկ քաղաքը** (2014թ. տարեվերջին՝ 4.5 հազ. բնակիչ) գտնվում է 2 070 մ բարձրությամբ լավային սարավանդի վրա (հեռավորությունը Երևանից՝ 175 կմ, մարզկենտրոնից՝ 53 կմ): Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք: Ճանաչված առողջարաններ են. «Ջերմուկ»-ը, «Նոր կյանք»-ը, «Գլաձոր»-ը, «Աղաջանյանի անվ. առողջարան»-ը և «Արարատ»-ը:

**Քաղաքի** անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ:

**Ջերմուկ քաղաքի** տնտեսության առաջատար ճյուղը ոչ ոգելից ըմպելիքի, **«Ջերմուկ» հանքային ջրի**, արտադրությունն է:

**ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ**



**ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	Քանակը				
	2010	2011	2012	2013	2014
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	265	229	227	231	313
այդ թվում՝					
խանութներ	172	161	159	167	249
կրպակներ	59	46	46	43	43
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	-	-	-	-	-
առևտրի այլ օբյեկտներ	33	21	21	20	20

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	Քանակը				
	2010	2011	2012	2013	2014
Պետական նախադպրոցական	17	17	18	18	18
Պետական հանրակրթական	51	51	50	50	50
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	1	-
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	8	7	7	7	8
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	1	1	1	1	1
Պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	2	1	2	2	2
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	1	1	1	1	1
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	-	-

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ*
Եղեգնաձոր	ք. Եղեգնաձոր	7 809
Վայք	ք. Վայք	5 797
Զեքմուկ	ք. Զեքմուկ	5 434
	ք. Կեչուտ	

\* ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

<sup>1</sup> Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

	<b>Համայնքի անվանումը</b>	<b>Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **</b>	
1	Ագարակաձոր		1328
2	Աղավնաձոր		2 030
3	Աղնջաձոր		440
4	Արենի	•Արենի •Ամաղու Amaghu	1 966
5	Արտաբույնք		1 149
6	Արփի		1 276
7	Գետափ		2 420
8	Գլաձոր		2 760
9	Գնիշիկ	•Գնիշիկ • Մոզրով	200
10	Գողթանիկ		189
11	Ելփին		1 368
12	Եղեգիս		460
13	Թառաթումբ		433
14	Խաչիկ		1 004
15	Հերմոն	• Հերմոն •Արատես •Կալասար	213
16	Հորբատեղ		263
17	Հորս		288
18	Մալիշկա		5 095
19	Շատին		2 036
20	Չիվա		1 014
21	Ռինդ		1 510
22	Սալլի		245
23	Վարդահովիտ	•Վարդահովիտ •Գետիկվանք •Սևաժայռ	238
24	Վերնաշեն		1 307
25	Քարագլուխ		860
1	Ագատեկ		566
2	Արին		343

\*\* Գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեզիստորների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2015թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.5%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **	
3	Արտավան		282
4	Բարձրունի		451
5	Գնդեվազ		899
6	Գոմք	•Գոմք •Ախտա •Կապույտ	232
7	Զատիթափ	•Զատիթափ •Հորաղիս	1 530
8	Զեղեա		168
9	Խնձորուտ		449
10	Կարմրաշեն		240
11	Հերիեր		788
12	Մարտիրոս		701
13	Նոր Ազնաբերդ		161
14	Սարավան	•Սարավան •ՌԻդեձոր	284
15	Սերս		206
16	Փոռ		133

**ՀՀ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2014թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղա- մարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	5 104	4 896
Ծնվածներ, մարդ	124	58	66
Մահացածներ, մարդ	95	47	48
Ամուսնություններ	63	X	X
Ամուսնալուծություններ	15	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	45.2	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	200	103	97
հանրակրթական	1 264	581	683
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	211	144	67
նախնական մասնագիտական (արհեստագործական)	21	6	15
միջին մասնագիտական	54	33	21
բարձրագույն մասնագիտական	41	25	16
Առողջապահության ոլորտ՝			
Հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	35 439	...	...
Մարզիկներ, մարդ	408	70	338
Զբաղվածներ, մարդ	4 566	2 345	2 221
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	199	151	48
բժիշկներ	21	...	...
միջին բուժանձնակազմ	50	...	...
Գործազուրկներ, մարդ	683	464	219
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 842	1 106	736
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	402	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	37 611	...	...
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	225	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	37	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	20	X	X
միջին ծանրության	14	X	X
ծանր	3	X	X
առանձնապես ծանր	-	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: